

3. «Ղիափները» (չախկալ) որ շատ կանչեն, անձրեւ մօտիկ կը լինի:

4. Հաւը որ քթթուի, անձրեւ կը գայի:

5. Ցերեկով որ գորսոր կրկռայ՝ անձրեւ կը լինի:

6. Ճատ որ անձրեւ և «ղիափը» կանչե՞ օդը պիտի բացուի:

7. Կատուն որ երեսը կրակին դարձնի, ցուրտ պիտի անէ:

8. Կատուի բերը թէ մեծ լինի, ցուրտ շատ կը լինի:

9. Լուսնի եղջրւրները թէ վեր դարձած լինին, այն ամիսը երաշտ կանցնի. Խակ թէ ներքեւ՝ անձրեւ շատ կը գայի:

10. Եօթը տարին մէկ անգամ լուսաստղը լիտ է մնում, (առաւօտները ուշ է երեսում և իր տեղում չի լինում). լիտ մնացած տարին ձիւն քիչ կը գայի:

11. Ասում են թէ՝ որ տարին որ անտառում կաղին, շազանակ և առհասարակ վայրի պտուղներ շատ են լինում, այն տարին ձմեռը խիստ է լինում:

VIII. Աշխարհի եւ ազգեր:

Աշխարհու բնույթը վրայ է իտակուած: Աշխարհքի տակի հիմքը մի եղան վրայ է կանգնած: Եզր երրոր պառկի, աշխարհքը վրան պիտի քանդուի: Ասուուած դրա համար մի ճանձ է դրել, որ եղան չորս կողմը տղտղում, ման է գալիս. թէ որ եզր պառկել ուղենայ, նրան պիտի կճէ: Եզր դրա վախից չի պառկում և աշխարհքը կանգնած մնում է:

Ասողներ էլ կան թէ աշխարհքը կարմիր եղան «կօտեօշի» (եղջրւր) վրայ է կանգնած:

Եկի ասում են, թէ աշխարհքը գրկած պահում է մի մեծ ձուկ եր գլխով ու պոչով, որոնք իրարից շատ հեռու չեն: Գլուխը համարեա մի թիզ միայն հեռու է պոչից: Բերանը միշտ աշխատում է, որ պոչը կտրի, ուտի, բայց չի կարողանում: Որ ժամանակ որ պոչը կտրուի, աշխարհքը դուրս կը պրծնուի ու կը կործանուի:

Աշխարհի վերջը: Վերջի երեք օրին օր ու գեշեր կրակէ անձրեւ պիտի գայի:

Ազգեր ու սէրութիւններ; Համշէնցիների հաշտով ամբողջ աշխարհքում կալ «Եթմիշ իքի բուզուք» (72^{1/2}) միլէթ» (ապդ), «տասվերկու խաչապաշտ թագաւոր» և «օխտն ու կէս հայ»: (Ի հարկէ՞ գիտեն որ հայը այդքան քիչ չէ. այդպէս ասելով՝ ուզում են ցոյց տալ որ շատ չէ):

Հայէրի գողմելու պատճեռը: Տաճկի սուլթանին մի որդի է լինում. ուստի թագաւորը նրան մի օրօրոց է ընծայ դրկում: Սուլթանն էլ իր կողմից նրան մի խաչ է դրկում: Այդ խաչի համար է, որ հայերը կամաց-կամաց անց են կենում Ռուսիակի կողմը:

Ուստի: Մէկ անգամ Քրիստոսը ծովեղեղքին ման էր գալիս: Տեսնում է մի ուստի պահապան մեռած մնացել է ափին: Խսկոյն նրան յարութիւն է տալիս: Ուստի վեր է կենում և, տեսնելով իր մօտ կանգնողին, շուտով նրան հարցուփորձում, նրանից անցաղիր է պահանջում:

Ուստի իրանց հուատը «Հօրումներից» (յոյն) են գնել, մէկ նաւ աղ տալով:

«Լէմ» (գերմանաց) «Լէմոր» տաճիկներից անիծուած է, որպէսկետե շատ տաճիկ է ջարդել. որիշի դէմ կուի գնալ նըրան չի աջողութել:

«Քոշ» (*-որ): Հրէաները Քրիստոսին խաչելիս, ուզեցել են սրտից խաչել նրան մի մեծ մեխով: Որտեղից որտեղ պատահմամբ մի քուրդ է գալիս այնտեղ: Նրա աչքը մնում է մեխի վրայ. գողանում է և այլալիսով ազատում Քրիստոսին սրտից մեխուելուց: Դրա համար էլ Աստուած «Հէ՛լալ» է արել քրդին գողութիւնը:

Սոսմբօլի առնելը: Տաճկի սուլթանը մէկ անգամ գալիս խնդրում է «Հօրումների» թագաւորից կաշուի չափ մի տեղ նրա մայրաքաղաքում: Նա էլ տալիս է: Սուլթանը կաշուից բարակ ժելեր է շինում և իրար կցելով նրանցով պաշարում ողջ քաղաքը: Երբ «Հօրումների» թագաւորին իմաց են տալիս, գուող «Հօրումը» չը հաւատալու: Է դնում և ասում. «թէ որ այս ամանի եիմած ձկները կը սաղնան ու կը խաղան, սուլ-

թանն էլ իմ ձեռքից կառնէ քաղաքը»: Զիները, դժբախտարար, սաղնում—խաղում են, և քաղաքն էլ առնում է:

Վայրենի և Տիականի հոբեկի: Համշէնցիներն ընդունում են, որ բացի մեր պէս սովորական մարդկանցից, սարերում կան և «Աէ՛րի-սարի» մարդիկ, ինչպէս և կան մալերի վայրի տեսակներ: Պատմում են, թէ սարերում իրանց աջողուել է տեսնել աղղախսիներին, որոնք ամբողջապէս ոտից զլուխ մաղու, անլեզու և խախտ արարածներ են, մարդկանցից փախչում են և իրարից հեռու և ջոկ ապրում:

Պատմում են էլի. թէ իրանց հայրենիքում, Սինօպի կողմերում մի ժամանակ ապրելիս են եղել մի տեսակ վայրենի, աժդահայ հսկայ մարդիկ, որոնք երկու աչքի տեղ՝ մի հատ խոշոր աչք են ունեցել ճակտի մէջ տեղը, այսպէս կոչուած՝ «Դէ՛փէ՛զեօղներ»—կամ միականիներ:

XL. Ս ր ե ր.

Սուրբ Կոյսը. Մէկ օր Ցիսուսը կորել էր. Մարիամը մանէր զայխս՝ որ գտնէ: Գալիս հասնում է մի գետի մօտ, որի ձայնը աշխարք էր ըռնել: Մարիամը հրամարում է գետին որ ձայնը կտրէ, և զետն էլ տեղն ու տեղը լոռում է: (Գետի անունը չը զիտեն, բայց հաւանական է՝ Ցորդանանի համար լինի աւանդութիւնը):

Սուրբ Սուրգէնը: Պատմում են, որ առաջաւորաց պասիշարթում ու Սարգիսը եօթը «Հօրում» և մէկ հայ պիտի խեղդէ՝ ձնի ու բքի հանդիպեցնելով նրանց: Ցոյներն այդ շաբթում ոչ միայն պատ չեն պահում, այլ «ինարու» չորեքշաբթին և ուրբաթն էլ են ուտում:

Մէկ անգամ այդ շաբթում մէկ յոյնի բռնում ու ստիպում են, որ պատ կենայ: Գցում են ամբարը, բայց «ինար հօրումը» բան չը գտնելով՝ իր տրեխներն է կրծում, որ չասուի, թէ պատ է պահել:

«Խորբենց»—սուրբ Գեորգէ: Ջատերը մինչեւ այսօր էլ հայրենական սովորութիւնով «մեծ կիրակի» են համարում ապրի-